

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀՈՒՇԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

Մասնակցությամբ՝ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ՝ Ա. Հովհաննիսյանի, համայնքի ղեկավարի տեղակալ Մ.Առաքելյանի, ավագանու և 58 համայնքի բնակիչների:

2017թվականի հունվարի 22-ին

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հուշակերտ համայնքի ղեկավարը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Մահմանադրությամբ, նրանցից բխող օրենսդրական և ենթօրենսդրական ակտերով, «Տեղական Ինքնակառավարման մասին», «Իրավական ակտերի մասին», ՀՀ օրենքով, համայնքի ղեկավարի աշխատակազմի» ավագանու և համայնքապետարանի ենթակայության տակ գտնվող հիմնարկների աշխատակիցների միջոցով իրականացրել է իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում՝ իր լիազորությունները:

Հիմնական նպատակը՝ համայնքի բնակչության կենսամակարդակի բարձրացումն է, որին հասնելու ճանապարհին սահմանվել են կարևորագույն սոցիալ-տնտեսական խնդիրները, որոնք էլ անհրաժեշտություն է եղել լուծելու 2017թ. տարվա ընթացքում:Այդ խնդիրների լուծման համար աջակցել են Արմավիրի մարզպետը, մարզպետարանի աշխատակազմը, համայնքի ավագանին:

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ԲՆԱԳԱՎԱՌ**

Համայնքի ղեկավարը աջակցել է համայնքի բնակչության գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը, ինչպես նաև գյուղ.մթերքների իրացմանը:

Հետևողական աշխատանք է տարվում ոռոգման ջրի մատակարարման, որ ինչպես գիտենք բավականի պրոբլեմների առաջ կանգնեցրեց հողագործներին:

Օգնել է կազմակերպելու աշնանացան հացահատիկի բերքահավաքը:

Համայնքը ունի իր առանձնահատկությունները:

Հիմնականում զբաղվում են հողագործությամբ , այգեգործությամբ և պտղաբուծությամբ:

Ուշադրություն կենտրոնում է պահվում աճեցրած բերքի իրացման աշխատանքներին և պարբերաբար կատարվում է ներտնտեսային ոռոգման ցանցի մաքրման աշխատանքները:

2016թվականի աշնանը կառավարության կողմից հատկացված աշնանացան հացահատիկի և գարու սերմացունները արդարացրեցին գյուղացիների սպասելիքներ : Մեկ հեկտարի հաշվարկով ստացվեց բարձր բերքատվություն :

Կառավարության կողմից հատկացվել է պարատանյութ և դիզվառելիք շուկայական գներից ցածր գնով:

Համայնքի բնակիչները այսօր էլ ձեռք են բերում անորակ թունաքիմիկատներ բարձր սակագներով :

Ամմիջական հսկողություն է իրականացվում ասնաբուժական ծառայության գործում՝ ժամանակին կատարվում է բոլոր տեսակի հակահամաճարակային միջոցառումները կենդանիների հիվանդությունների կանխարգելման ուղղությամբ:Կենդանիների շրջանում չի հայտնաբերվել ոչ մի տեսակի հիվանդություն:

Հետևողական և սիստեմատիկ հսկողություն է սահմանվում հանձնաժողովի կողմից առևտրի, հասարակական սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում գործող օբյեկտների գործողության վրա:Ներկայումս համայնքում գործում է 2 առևտրի և 1 բեմգալցակայան:

ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

ԲՆԱԳԱՎԱՌ

Ամենօրյա ուշադրության կենտրոնում է գտնվում և օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացվում հողերի նպատակային օգտագործման, ինչպես նաև ապօրինի ընդերքօգտագործման վրա:Միստեմատիկ տեղեկատվություն է ներկայացվում անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանումը՝ սեփականության իրավունքի գրանցման վկայականներում ճշգրտումներ կատարելու վերաբերյալ:

Ամենօրյա աշխատանք է տարվում հողօգտագործողների հետ հողի հարկի , գույքահարկի գծով գոյացած ապառքների հավաքագրման գործում:Բնակիչներին տեղեկացվում և ծանուցվում է

«Հողի հարկի արտոնություններ տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները:

**ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԲՆԱԳԱՎԱՌ**

Կառավարության սահմանած կարգով վերահսկողություն է իրականացվում համայնքի քաղաքաշինական գործունեության նկատմամբ:

Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրման և սահմանների ճշգրտման աշխատանքներ, տրվել են ճշտված իրավիճակային հատակագծեր: Սխտեմատիկաբար կատարվում է աղբահանություն: Անցկացվել է համայնքում փողոցների լուսավորություն:

**ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ,
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ, ՍՊՈՐՏԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ**

Համայնքում գործում է միջնակարգ դպրոց:

Աշակերտների թիվը՝ 84:

Աշխատողների թիվը՝ 30-ը, ուսուցիչներ՝ 25:

Գյուղապետարանի ուշադրության կենտրոնում է դպրոցը: Կրթության որակը գտնվում է բարձր մակարդակի վրա:

Կազմակերպվել է միջոցառում նվիրված մայիսի 9-ին և գորակոչի հետ:

Դպրոցի ցածր դասարանների երեխաներին և Նոր Տարվա կապակցությամբ հատկացվել է նվերներ:

Համայնքի ղեկավարի ամենօրյա ուշադրության կենտրոնում է նաև առողջապահության ոլորտը: Բուժ. ամբուլատորիան կահավորված է ժամանակակից սարքավորումներով, համայնքի բնակչության բուժ. սպասարկումը գտնվում է բարձր մակարդակի վրա, ունի շտապօգնության մեքենա: Վերանորոգվել է քամու կողմից բուժամբուլատորիայի պոկված տանիքը:

Համայնքում գործում է «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողով, որի հիմնական խնդիրն է՝ անգործունակ կամ սահմանափակ գործունակ քաղաքացիների, ինչպես նաև անչափահասների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովումը, ընտանիքում ապրելու ու դաստիարակելու երեխայի իրավունքի ապահովումը, կյանքի դժվարին իրավիճակում գտնվող, այդ թվում՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովումը:

Ուշադրության կենտրոնում է գտնվում սոցիալապես անապահով ընտանիքները:

Համայնքում բարձր է պատասխանատվությունը գորակոչի նկատմամբ: Չորակոչից խուսափողներ չկան:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2017թ. բյուջ.

Եկամուտներ

հաստատված
հազար դրամ

փաստացին
հազար դրամ

վարչական բյուջեն ընդամենը

21.699 .9

21.799.9

հողի հարկ

5.325.7

5.413.9

գույքահարկ փողադ.

2.050.0

2.122.8

գույքահարկ շենքշին.

480.0

481.3

տեղական վճար

1.000.0

1.000.0

վարձավճար	400.0	400.0
տուրք	100.0	19.7
դոտացիա	12.344.2	12.344.2

Բյուջեյի կատարողականը ծախսերը տնտեսագիտական դասակարգմամբ գ

	հաստատված հազար դրամ	փաստացին հազար դրամ
ընդամենը	21.699.9	21.699.9
տեղական ինքնակառավար.	17.723.4	17.723.4
ընդհանուր բնույթ. ծառ.	25.0	25.0
ընդհան. բնույթ. հան. ծառ.	1.5	1.5
աղբահանություն	910.0	910.0
ջրամատակարարում	2.850.0	2. 850.0
փողոցի լուսավորություն	190.0	190.0

Հուլիսի 1-ին համայնքի

ղեկավարի տեղակալ՝

Մ.Առաքելյան

ՀՈՒՇԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔ

Հուշակերտ համայնքի այսօրվա հիմնախնդիրներն

1. Մանկապարտեզի հիմնավերանորոգում:
2. Փողոցների ասֆալտի վերանորոգում:
3. Գյուղմթերքների վերամշակման փոքր արտադրամասի ստեղծում:
4. Խմելաջրի ներքին ցանցի վերանորոգում:

Արմավիրի մարզի Հուշակերտ համայնքի

ղեկավարի տեղակալ՝

Մ.Առաքելյան